ԻՆՉՊԵՍ ԴԻՄԱԿԱՅԵԼ ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆԸ

Կլիմայի փոփոխության բացասական ազդեցությունները հնարավոր է նվազեցնել՝ իրականացնելով մի շարք կանխարգելիչ միջոցառումներ: Այդ գործընթացը կոչվում է հարմարվողականություն կլիմայի փոփոխությանը: Հարմարվողականությունն օգնում է մեղմել կամ խուսափել կլիմայի փոփոխության վնասակար հետևանքներից և գտնել լուծումներ՝ կլիմայական նոր պայմաններում ապրելու և զարգանալու համար:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

- Հավաքել և ոռոգման համար օգտագործել անձրևաջրերը
- Տեղադրել ոռոգման արդյունավետ համակարգեր՝ կաթիլային ոռոգում
- Տեղադրել հակակարկտային ցանցեր
- Դաշտերի եզրերին տնկել ծառեր, որոնք կլինեն հողմաբեկ պատնեշ
- Կառուցել ջերմոցներ
- Աճեցնել ջերմակայուն և չորադիմացկուն մշակաբույսեր
- Ապահովել ոռոգման ժամերի ճիշտ ընտրություն

ԲՆԱԿԱՆ ԷԿՈՀԱՄԱԿԱՐԳԵՐ

- Պահպանել բնության բազմազանությունը, քանի որ հարուստ կենսաբազմազանություն ունեցող էկոհամակարգերն ավելի հեշտ են դիմակայում կլիմայի փոփոխությանը
- Պահպանել հրդեհային անվտանգության կանոնները
- Անտառային էկոհամակարգերում չարածեցնել ընտանի կենդանիներ
- Ապահովել արոտավայրերի համաչափ օգտագործումը՝ բուսածածկի վերականգնումը պահպանելու համար

ՄԱՐԴՈՒ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ

- Ավելացնել բնակավայրերի կանաչ տարածքները
- Տեղեկացված լինել հիվանդությունների տարածման և կանխարգելման միջոցառումների մասին
- Հագնվել եղանակին համապատասխան
- Հաճախ ջուր խմել

ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ՆՎԱԶԵՑՈՒՄ

- Չաղտոտել սելավատարերը և գետերը
- Ամրացնել գետերի ափերը
- Ափամերձ տարածքներում տնկել ու պահպանել խորարմատ ծառեր
- Չհետևել եղանակի տեսությանը
- Տեղադրել ջրահեռացման համակարգեր